ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է Թուրքիայի բաժնի կրտսեր գիտաշխատողի մրցույթ

ՀՀ Կառավարության՝ 2023 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 2298-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է ***Թուրքիայի բաժնի 1 դրույք կրտսեր գիտաշխատողի*** մրցույթ:

Մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում,
2) հանդիսանում է Թուրքիայի նորագույն պատմության, քաղաքական համակարգի և գաղափարախոսական հոսանքների մասնագետ,
3) տիրապետում է թուրքերեն լեզվի:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
1) դիմում՝ տնօրենի անունով,
2) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
3) ինքնակենսագրություն (CV),
4) լուսանկար 2 հատ,
5) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,
6) բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի), գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,
7) հրատարակված գիտական աշխատությունների և/կամ գյուտերի ցանկը (առկայության դեպքում),
8) հավակնորդի նախաձեռնությամբ գիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել **մինչև 2025 թ. նոյեմբերի 13-ը (ներառյալ) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, գիտական քարտուղարին, հեռ. +374 10 583382:**